«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Լեո ՖԱ»

Էլեկտրոնային փոստի հասցե՝ futsalleo2016@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07.03.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ՖԶԳԽ-026
Խախտում՝	«Լեոսթանդքոյին» թիմի ֆուտզալիստ Լուիզ Ֆերնանդո Տեիշեիրա Ֆիլհոի (53096) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Ժ, 16-րդ կետ)
Առաջնություն՝	Ֆուտզալի Հայաստանի Գավաթի խաղարկություն 2024
Խաղ՝	«Յունիսպորտ»-«Լեոսթանդքոյին», 03.03.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

«Լեոսթանդքոյին» թիմի ֆուտզալիստ Լուիզ Ֆերնանդո Տեիշեիրա Ֆիլհոին (53096) որակազրկել 6 (վեց) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի մարտի 3-ից սկսած և ներառվում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):

Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 4 (չորս) խաղ, պայմանականորեն չկիրառել: «Լեոսթանդքոյին» թիմի ֆուտզալիստ Լուիզ Ֆերնանդո Տեիշեիրա Ֆիլհոի (53096) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի մայիսի 3-ը ներառյալ: «Լեո ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։